

թիւնը ճնշելու և վարչական անսահման կամայականութեան և ոտտիկանական ճնշումների . . .

Եւ քանի որ այդ պայմանները գոյութիւն ունին, քանի որ այդպիսի պայմաններ հրատարակող և պահպանող անձանց ձեռին է իշխանութիւնը, աւելի քան պարզամտութիւն կլինի հաւատալ կրօնական համընթացութեան կամ խղճի աղատութեան:

Այո՛, արդար զայրոյթով եղբայրակում է հեղինակը. —

Ռուս ժողովուրդը սարկութիւնից ոչ թէ ազատուած չէ, այլ դեռ այդ աշխատանքը սկսուած էլ չէ:

— Այո՛, Գօլիցին, Շերեմետե, Վարչաւայի գէներալ նահանգապետը կարող են ուղած կերպով բացատրել և դործադրել բարձրագոյն կամքն ու հրամանները, կարող են սխմել և ընդարձակել ուղած ձեռով և այդ դեռ կոչոււմ է ինքնակալութիւն և ոչ կամայական սահմանադրութիւն:

Վաճառուող փահանան.

„Биржевые Вѣдомости“ № 113-ում կարդում ենք. —

Երևանեան նահանգի Էջմիածնի ու Նիկողայոս եկեղեցու ծխատէր Բօրիս Վենետամինովը, հայրենասիրութեամբ բոլորքուած վճռել է ծախել իրեն իւր ընտանիքով այն ռուս զբամառիոջ, ով որ կուղարկի զինուորական նախարարութեան «զոնէ երկու հալայածանաւի արժէքը», կոչելով նրանց «Բօրիս» և «Եկատերինա զաւակներով»:

Պահանջուած գումարն ուղարկելուց յետոյ, նա իրեն, իւր կնոջը, չորս աղջկերանց և որդուն դնում է «բարի աէրերի» տրամադրութեան ներքոյ և իրաւունք է տալիս «անմիջապէս պահանջել նրանց»:

Նիժեգօրոգի քաղաքացի Մինինը մի ժամանակ կոչ էր անում գրաւ դնել «կանանց և երեխաներին» Մոսկովան և Ռուսը փրկելու համար:

Այն ժամանակներում դեռ հնարաւոր էր համարուում կնոջ և որդւոց հետ վարուել ցանկացած ձեռով՝ իբրեւ սեփականութեան հետ, ճորտերին գրաւ էին դնում, փոփոխում և վաճառում՝ որպէս անշունչ առարկաներ: Բայց այդպիսի մի միտք ինչպէս կարող էր ծագել ներկայումս:

Կերեւի հայրենասիրական էջոտազով (յաւիշտակութեամբ) բռնուած Վենետամինով քահանան չի կշռում դրութեանց տար-

բերութիւնը: Եւ իւր բոլոր ունեցածն առաջարկելով հայրենեաց սեղանի վրայ, այդ (էկզալտիրովաննի) յափշտակուած հայրենասէրը չի մտածում իւր մերձաւորների անձնաւորութեանց և իւր ընտանիքի առաջարկած զոհաբերութեան անդործադրելիութեան մասին:

Նա մանրամասն տեղեկագրում է իւր մասին, որ գիտէ հինգ լեզու (ռուսերէն, ասորերէն, հայերէն, թուրքերէն և վրացերէն): Գրում է, որ ինքն ու իւր ընտանիքը «ֆիզիքական սչ մի արատ չունին», որ նա իւր կրթութիւնը ստացել է հոգեւոր սեմինարիայում և միսիօներական դասընթացներում, ունի կամելաւհա յիշում է, որ լաւագոյն վկայութիւններ ունի վրաստանի էկզարխ Ալէքսէյից և այլն:

Վաճառուելու առաջարկութիւնը մեր խմբագրութեան մէջ ստացուած է բլանկի վրայ, պաշտօնական № 93 գրութեամբ ապրիլի 21-ից և վերջում կնքուած է եկեղեցական կնքով:

Վաճառուելու պատճառը պաշտելի հայրենիքի պաշտպանութիւնն է խորամանկ Եսայիսիայից:

Իւր և իւր ընտանիքի վաճառման վճիռը նա յայտնում է ըստ իւր վկայութեան՝ մտաւոր առողջութեան և իւր բարոյական պարտականութեան խոր գիտակցութեամբ: - -

Բայց նա արդեօք իրօք հոգեպէս առողջ է: Եթէ նա մենակ է, ապա արդեօք ներկայումս, երբ Կովկասում տիրում է մտքերի յուզումն ու խռովութիւն, կարելի է նրան թողնել քարոզչական գործունէութեան և ծուխը հովուելու համար: Անկարելի է երեւակայել, որ ռուս քահանան չը գիտենայ, թէ մեղանում պետական օրինաց համաձայն չի կարելի ոչ ծախել և ոչ էլ գրաւ դնել մարդկանց:

Բայց այն դէպքում, եթէ նա առողջ է, նրա գրութիւնը՝ արտատպելու խնդրանք՝ հանդիսանում է մի միայն բեկլամ նրա հայրենասիրութեան:

Արդեօք վայել են այդպիսի միջոցները մի քահանայի համար:

ՊՐԱԽՕՍԼԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՎՐԱՅ

Մայիսի 27-ից Թիֆլիզ հաւաքուեցին վրաստանի և Կախէթիայի վրացի քահանաներն իրենց եկեղեցու անյետաձգելի կարիքների մասին խորհրդակցելու: Վրաստանի սրբ. էկզարխը սկզբում թէև յայտարարեց, որ ոչ մի ժողով թոյլ չի տրուի,